

Հաւանաբար ամէնէն զեղեցիկ բառը աշխարհի բոլոր լեզուներուն մէջ: Եւ սակայն...

Կը բաւէ անդրադառնալ թէ ինչ կ'անցնի կը դառնայ ամէն կողմ եւ զեռ որքան Պասթիւններ կը մնան, ոչ իսկ խորհրդանշական, ինչպէս էր ան՝ որ զբաւուեցաւ 1789, Յուլիս 14-ին եւ ուր միայն եօթը քրէական յանցապարտներ կային, բայց որ մնաց ցայսօր յանուն ազատութեան մղուած պայքարի մը խորհրդանշիչը:

Եւ ճիշդ, ողբերգական այս օրերուն հրապարակ կ'ելլէ Էմանուէլ Ինթէրնէշնըլի նոր տեղեկագիրը, որ, անգամ մը եւս, կը յայտնաբերէ մարդկային տարրական իրաւունքներու տարուէ տարի աճող բռնաբարումները, անհամար երկիրներու մէջ, հոն՝ քիչ մը աւելի, հոս՝ քիչ մը պակաս:

Հարիւր հազարաւորներ կը մնան խուցերու խորը, ուրկէ չեն կրնար իսկ դուշակել թերեւս բանաստեղծին այնքան կապոյտ ու հանդարտ երկիրքը, տանիքին վրայ: Եւ հոն են, որովհետեւ, պարզապէս, իրենց երկրին իշխանաւորներէն տարբեր էր իրենց կարծիքը ազատութեան մասին եւ կը խորհէին թէ կրնան արտայայտուիլ, ազատօրէն:

Բայց, տարբեր է չոր իրականութիւնը ու ոչ մէկ յեղափոխութիւն կրցած է հիմնովին լուծել հարցերը, արդարացնել այն յոյսերը որոնց ծնունդ տուած էր, ոչ իսկ ան՝ զոր կ'ողբեկոչէնք այսօր եւ որ սակայն ամբողջ աշխարհին համար եղաւ նոր օրերու ներշնչարանը:

1789-ին, կեղեքուած ու անօթի ժողովուրդ մը Պասթիւլը զբաւելով կարծեց թէ յաղթած է բոլոր անարդարութիւններուն: Վերջ գտած են բոլոր առանձնաշընորհումները: Բայց, անոնք երբեք չեն վերնար, այլ յաճախ միայն աչք կը փոխեն: Ու յուլիսեան խանդավառ օրերուն յաջորդեց Սարսափը եւ Տիկին Ռոլան, կառափնատի ճամբուն վրայ, արտասանեց պատմական ճշմարտութիւն մը՝ «Ազատութիւն, որքա՞ն ոճիրներ կը գործուին քու անունովդ»:

Ու մինչեւ այսօր անոնք չեն դադրած:

Բոլոր մարտերը կը մղուին յանուն ազատութեան, ամէնուրեք: Ամէն առաւօտ արեւը դիտելու ազատութիւն, բարեւ, ընկեր ըսելու ազատութիւն, մանուկի մը ժպիտը տեսնելու ազատութիւն, պարծայիտը տեսնելու ազատութիւն: Պարտաւարտ չեն Սարայեւոյէն Արցախ ուրիշ բան չէ մարդուն ուղածը: Միայն՝ ազատութիւն: Բայց մարդը դայլ մը կը մնայ մարդուն համար ու զեռ այսօր կրնանք հաստատել թէ ամէնէն դաժան բռնատիրութեան մը տապալումն իսկ չեն ջանակարար ժողովուրդները, որոնք անոր անմատչելի կարծուած երազով ապրեցան տասնամեակներ: Ու երբ անհետացաւ բռնակալութիւնը, չփոթեցին ազատութիւնը, ազատութիւններու հետ ներածելով արեւմտեան ամէնէն տապալանած բարբերը:

Բայց, երազն է զերհօր: Ու լաւ է որ այդպէս է, որպէսզի միշտ շարունակենք հաւատալ անոր ու գրել իր անունը՝ Ազատութիւն:

« Յ Ա Ռ Ա Զ »

«Ժուռնալ -- Տիւ -- Տիմանը»-ի (Յուլիս 12) մէջ է որ քանի մը տողով կը արուէր լուրը՝ «Հայ Ռուսի ղէմ՝ 11 մեռեալ»:

Այս մասին, «Արմէնիք» հետեւեալը կը հաղորդէր. -- Ռուսական 7-րդ բանակի զինուորներ, Յուլիս 10-ին, փորձած են երկրէն դուրս հանել յատուկ կապի ռազմական կայաններու հսկայ զինամթերք: Վրաստանի սահմանազուխը, հայ մաքսատան պաշտօնեաները պահանջած են անհրաժեշտ արտօնադրերը, մէկը՝ 7-րդ բանակի Շտապի, միւսն ալ Հայաստանի Պաշտպանութեան նախարարութեան կողմէ, ինչ որ չունէին: Զինուորները փորձած են փախուստ տալ եւ իրաւապահ մարմիններու ներկայացուցիչները հետապնդած են: Յետագային, զինուորները կրակ բացած են քաղաքին կեդրոնն իսկ, որու հետեւանքով զոհեր կան: Պարզ է որ Հայերն ալ հակադրած են: Հինգ ռուս զինուոր մեռած է: Նաեւ (բոս «Արմէնիք»-ի) իրաւապահ մարմիններէն 3 մեռեալ եւ 2 վիրաւոր, երեք մեռեալ եւ չորս վիրաւոր ալ անցորդներէն: Երեւանէն, Յուլիս 13-ին, մեր առած լուրերու համաձայն թէեւ, հինգ զինուորներէն դատ, միայն մէկ անցորդի վիրաւորուած ըլլալը յայտնի էր եւ ուրիշ զոհ չկար: Ինչպէս միշտ, կողմերը միւս կողմին վրայ կը ձգեն նախադրական պատասխանատուութիւնը, այսինքն Ռուսերը՝ Հայերուն վրայ:

Հակառակ հրադադարին հոս -- հոն ռուսներ կը շարունակեն տեղալ, քանի Աղբրեջան չի յարգեր (ինք կ'ըսէ որ Հայերը չեն յարգեր...), թիրախ են Վարդենիս, Տաուշ, Կապան - Գորիս ճամբան: Մարտունիի շրջանն ալ ռազմական կուտակումները կը շարունակուին:

**

-- Երեւանէն Ստեփանակերտ մեկնած է երեսփոխաններու խումբ մը զլիսաւորութեամբ Պետրոս Քացախեանի, ըստ Գերագոյն Խորհուրդի որոշումին՝ որ էր մընայուն պատուիրակութիւն ունենալ Լեւոնային Ղարաբաղ:

**

-- Երեւան տեղի ունեցած է «Ազգային Համաձայնութեան» համաժողովը, նպատակ ունենալով Հայաստանի ներկայի ճգնաժամային իրավիճակը յաղթահարելու միջոցներ գտնել: Ժողովին նախաձեռնակ եղած են խումբ մը մտաւորականներ: Մասնակցած են քաղաքական տարբեր կուսակցութեանց ներկայացուցիչներ: Քննարկուած է՝ «ազգային պետականութիւն, այսօր ու վաղը» հարցը: Արտայայտուած տեսակէտները պիտի վերլուծուին մասնագէտներու կողմէ եւ ներկայացուին Հանրապետութեան Նախագահին: Ժողովին մասնակցած են Պետական նախարար՝ Գրիգոր Արէշեան եւ Նախագահի խորհրդական՝ Ժիրայր Լիպարիտեան:

Այսուհետեւ, ամէն ամիս, Հայաստան գտնուող ղեկավարները, այլ երկիրներու պաշտօնական -- կառավարական շրջանակները, ինչպէս նաեւ խաղաղութեամբ զբաղող անձերը կը ստանան Հանրապետութեան նախագահի աշխատակազմի իրազեկման եւ վերլուծական բաժնի կողմէ պատրաստուած «Միջազգային տեղեկագիրը», որ կը հրատարակուի անգլերէն եւ ֆրանսերէն: Ան կոչուած է դառնալու ամենահաւաստի աղբիւրը միջազգային քաղաքական ասպարէզի Հայաստանի հետ կապ ունեցող հարցերուն:

Տէպա էջին մէջ, կը Մոնտ երկու յոգուած հրատարակած էր, որու մէկը ստորագրած էր Ժերար Շալեան նուիրուած փոքրամասնութեանց, ուր Հայերու պարզային ալ կ'անդրադառնայ հետեւեալ պարբերութեամբ...

... La majeure partie des problèmes conflictuels de minorités ont eu pour théâtre la périphérie de la Russie: Meskhs en Ouzbékistan, Ossètes du Sud en Géorgie, et surtout Slaves de Moldavie et Arméniens du Haut-Karabagh, autrefois région autonome, aujourd'hui privée de ce statut. Le gouvernement de Bakou, qui s'oppose au droit à l'autodétermination des 80% d'Arméniens, entendait, par un blocus puis par des actions armées, faire fuir ces populations chrétiennes vers l'Arménie, comme cela avait été le cas de la minorité arménienne de la région autonome du Nakhitchevan à une période antérieure. Le sort des armes n'a pas jusqu'à présent permis de réaliser ce dessein. Reste que seule une négociation internationale peut permettre de régler ce conflit sans solution militaire en garantissant les droits des Arméniens.

Ինչ կը վերաբերի Էջնա Պոնէրի գրութեան, Փանսէ Ռիւսի մէջ հրատարակուած հին յօդուած մըն է, Հոռմի առաջին ժողովին առթիւ (Սէ - ԷՍ - Սէ - Ը) եւ որուն ակնարկած էինք ատենին (Յուլիս 18):

զեկագիրը», որ կը հրատարակուի անգլերէն եւ ֆրանսերէն: Ան կոչուած է դառնալու ամենահաւաստի աղբիւրը միջազգային քաղաքական ասպարէզի Հայաստանի հետ կապ ունեցող հարցերուն:

-- Շահումեանի եւ Մարտակերտի շրջաններէն Հայաստան ժամանած է գաղթականներու երրորդ խումբը, որ կը բաղկանայ տասը հազար հոգիէ, զլիսաւորաբար կիներ, տարեցներ եւ մանուկներ: Այրերը տեղւոյն վրայ մնացած են կռուելու համար: Այս տեղեկութիւնը «Արմէնիք»-ի հաղորդած է բռնազաղթողներու հարցերու հանրապետական կոմիտէի նախագահը՝ Վլադիմիր Մովսիսեան: Ստեփանակերտի քաղաքային Խորհուրդի նախագահի տեղակալն ալ՝ Վլադիմիր Գէորգեան յայտնած է թէ տասը հազար ուրիշներ ալ ազատան գտած են Ստեփանակերտ, ուր բնակելի տուներու կէսը քարուքանդ է:

-- Յուլիս 12-ի զիշերը ցուրտը անըստպատելի «ժամանում» մը ըրած է Սեւանի աւազանի շրջանները: Մարտունիի շրջանը (Սեւանի հարաւը, ոչ Ղարաբաղի Մարտունին անշուշտ) ջերմաստիճանը 0-ի իջած է եւ ճիւն ալ տեղացած:

Յուլիս 14-ի Ազգ. տօնին առթիւ, «Յառաջ» լոյս չի տեսնի երեքշաբթի օր (Չորեքշաբթի, Յուլիս 15-ի քիւ): Մեր յաջորդ քիւր՝ Հինգշաբթի, Յուլիս 16: